

Արձանագրություն N3

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի

30.11.2016թ. նիստի

Օրակարգ

1. Ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
2. 2015-2016 ուս. տարվա 2-րդ կիսամյակի սոց. հարցման արդյունքների ամփոփում:
3. 2016-2017 ուս. տարվա առկա և հեռակա ուսուցման 1-ին քննաշրջանի ժամանակացույցի հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 60 անդամներից 43-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական, ռոմանական բանասիրության, անգլերենի թիվ 1, միջմշակութային հաղորդակցության անգլերենի և արտասահմանյան գրականության ամբիոնների վարիչները ներկայացրեցին ատեստավորված ասպիրանտներին և հայցորդներին և նրանց կատարած աշխատանքը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միաձայն քվեարկության արդյունքում հաստատվեցին ասպիրանտներին ու հայցորդներին ատեստավորելու վերոնշյալ ամբիոնների որոշումները:

2. ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի դեկան Ս. Աբրահամյանը ամփոփ ձևով ներկայացրեց 2015-2016 ուս. տարվա 2-րդ կիսամյակի սոց. հարցման արդյունքները: Դեկանը նշեց, որ խնդրահարույց արդյունքներ չկան, հիմնականում գնահատականները բարձր են և հորդորեց ամբիոնների վարիչներին ուշադրություն դարձնել մի քանի համեմատաբար ցածր գնահատականների վրա:

3. ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի դեկանը ներկայացրեց ժամանակացույցի հիմնական տվյալները՝ նշելով, որ վերջնական ժամանակացույցը պատրաստ կլինի դեկտեմբերի առաջին տասնօրյակում և խնդրեց ամբիոնների վարիչներին նախօրոք տեղեկացնել համընկնումների մասին, որպեսզի փոփոխությունները կատարվեն ժամանակին: Դեկանը խոսեց կարգապահության մասին, մասնավորապես կարևորելով այն հանգամանքը, որ դասախոսն իրավունք չունի իր կամքով խմբին թույլատրել դասը բաց թողնել, նույնիսկ եթե ջրամատակարարումը դադարեցված է: Նման դեպքերում առանց դեկանի թույլտվության նման որոշում չի կարելի կայացնել:

4. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Որոշեցին՝

- Տպագրության երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Աննա Հակոբյանի «Օրենսդրական տեքստի ոճակառուցվածքային առանձնահատկությունները» մենագրությունը:

- Տպագրության երաշխավորել Արտասահմանյան գրականության ամբիոնի դասախոս, բ.գ.թ. Ռուզաննա Պետրոսյանի «Ունամունոյի փիլիսոփայական արձակը» մենագրությունը:
- Տպագրության երաշխավորել Անգլերենի թիվ 2 ամբիոնի դասախոսներ Մ. Կարապետյանի, Զ. Վարդապետյանի, Գ. Հովհաննիսյանի և Ա. Պետրոսյանի «Building ESP Listening Skills: Political Leadership» ուսումնական ձեռնարկը:
- Տպագրության երաշխավորել Արտասահմանյան գրականության ամբիոնի դասախոս, բ.գ.թ. Արփի Պապոյանի «Էլիոթի Մեռյալ Երկիրը պոեմի լեյտմոտիվները» ուսումնամեթոդական ձեռնարկը:
- Տպագրության երաշխավորել Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Լուսինե Սարգսյանի «Բանավոր թարգմանության հմտությունների ուսուցման մեթոդական ձեռնարկ» ուսումնամեթոդական ձեռնարկը:
- Տպագրության երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի դասախոսներ Ն. Երնջակյանի, Հ. Մկրտչյանի և Ս. Գուլյանի «The World of English Language» երկրագիտության դասագիրքը:
- Երաշխավորել ԵՊՀ Անգլերենի թիվ 2 ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Իրինա Բուռնազյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչման ներկայացնելու համար:
- Երաշխավորել ԵՊՀ Անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Մարիաննա Սարգսյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչման ներկայացնելու համար:
- Հաստատել Արտասահմանյան գրականության ամբիոնի հայցորդ Նարինե Զաքարյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ վերաձևակերպմամբ՝ «Մինքլեր Լուիսի գեղարվեստական մեթոդի առանձնահատկությունները» Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ:
- Արտասահմանյան գրականության ամբիոնի հայցորդ Մարիամ Սիրունյանի «Կորուսյալ սերնդի թեման Ռ. Օլդինգտոնի վեպերում»՝ Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար վերանշանակել բ.գ.դ., դոց Ա. Առաքելյանին:
- Հաստատել Արցախի պետական համալսարանի հայ գրականության և լրագրության ամբիոնի հայցորդ Անուշ Դոլուխանյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «Ավանդույթը և նորարարությունը Վ.Բ. Եյթսի պոեզիայում»՝ Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ., պրոֆ. Արտեմ Հարությունյանին:
- Հաստատել Անգլերենի թիվ 2 ամբիոնի հայցորդ Գոհար Ղալաչյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «Լեռնային Ղարաբաղի խնդրի լուսաբանման լեզվագործաբանական հայեցակերպը անգլալեզու մամուլում»՝ Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ., պրոֆ. Ե. Երզնկյանին:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

30 նոյեմբերի 2016 թ.